

Լիլիթ Հակոբյանի «Կիրակոս Գանձակեցու «Պատմություն Հայոց» երկի լեզուն»
թեկնածուական ատենախոսության մասին

Լեզվի պատմության շրջանների անցումը պայմանավորված է լեզվի ողջ համակարգում կատարվող տեղաշարժերով, իսկ միննույն շրջանում դրսևորվող ենթաշրջանները պայմանավորված են լեզվի առանձին համակարգերում տեղի ունեցող փոփոխություններով: Սույն ատենախոսության նյութը վերաբերում է լեզվի պատմության միջին շրջանի կիլիկյան նորմավորման ենթաշրջանին, որը բնութագրվում է գրաբարի առկայությամբ, Ղ. Հովնանյանի բնորոշմամբ՝ «գրաբարախառն ռամկորենի» գործածությամբ և բարբառներով:

Աշխատանքում որոշ փաստերի քննության ժամանակ համադրվում են ինչպես միննույն լեզվավիճակի տարբեր փուլերը (XIII դարի գրաբարը և հին շրջանի գրաբարը), այնպես էլ տվյալ ժամանակաշրջանի տարբեր լեզվավիճակները:

Կիրակոս Գանձակեցու կյանքն ու գործունեությունը մշտապես եղել են մասնագետների ուշադրության կենտրոնում: Մ. Չամչյանը, Ղ. Ալիշանը, Գ. Զարբհանայանը, Հ. Մանանդյանը, Հ. Ոսկյանը, Մ. Աբեղյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Վ. Առաքելյանը, Ա. Զամինյանը և ուրիշներ բնորոշել են նրա՝ որպես հայ պատմիչի և եկեղեցական ու հասարակական գործչի տեղն ու դերը XIII դարի Հայաստանի քաղաքական, հասարակական, տնտեսական կյանքի պատմության մեջ:

«Պատմություն Հայոց» երկը հայոց պատմության արժեքավոր սկզբնաղբյուր է, որ մինչև օրս լեզվաբանների պատշաճ ուշադրությանը չի արժանացել: Այդ բացը հնարավորինս լրացնում է սույն ատենախոսությունը:

Աշխատանքը բաղկացած է առաջաբանից, չորս գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը 133 համակարգչային էջ է:

Առաջաբանը անդրադարձ է Կ. Գանձակեցու կյանքին ու գործունեությանը: Ներկայացվում է նրա մատենագրական ժառանգությունը, արժևորվում «Պատմություն Հայոց» երկը, տրվում է ժամանակաշրջանի լեզվական բնութագիրը: Միանգամայն ճիշտ է նկատում Թ. Շահվերդյանը՝ նշելով, որ «միջին հայերենի սահմանները ըստ հեղինակների ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանների դժվար է որոշել. բանն այն է, որ անկախ այն բանից, թե տվյալ հեղինակը ո՞ր դարում է ապրել, գերադասել է ստեղծագործել գրաբար: Այդպես են գրվել գրեթե բոլոր դարերում կերտված պատմագրությունները, դավանաբանական, փիլիսոփայական երկերը»¹: Կ. Գանձակեցու «Պատմությունը» բացառություն չէ. շարադրված է գրաբար, որն իր դասական վիճակով, բնականաբար, չէր կարող գործածվել, քանի որ լեզվի՝ դարերի ընթացքում կրած փոփոխություններից հետո այն որոշ չափով կորցրել էր «խիստ»

¹ Թ. Շահվերդյան, Գրաբարի հոլովման համակարգի և կրած փոփոխությունների մասին, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա, Ե., 2016, էջ 72:

դասականությունը: Բացի այդ՝ XIII դարում ապրող ու ստեղծագործող հեղինակը որքան էլ փորձեր կիրառել հին մատենագրությանը բնորոշ բառապաշար ու քերականական ձևեր, այնուհանդերձ ժամանակի շունչն ակնհայտ էր:

«Պատմութիւն Հայոց» երկի լեզվական քննությունը ենթադրում է անդրադարձ այն հիմնական առանձնահատկություններին, որոնք առնչվում են միջին հայերենի հնչյունական համակարգի, բառապաշարի և քերականական կառուցվածքի տարբեր իրողություններին:

Ատենախոսը քննվող երկի հնչյունական համակարգի վերլուծություն չի կատարել: Արդյո՞ք ձայնավորների, երկբարբառների և եռաբարբառների պատմական և շեշտափոխական հնչյունափոխություն կամ բաղաձայնական համակարգի որևէ փոփոխություններ, նաև բառային տարբերակներ արձանագրված չեն Գանձակեցու «Պատմության» մեջ:

Ատենախոսության առաջին զլուխը բառապաշարի քննությունն է: Առանձին ենթազլուխներով ուսումնասիրվում են բառապաշարի ծագումնաբանական և ձևաիմաստային խմբերը: Հեղինակն անդրադառնում է գրաբարից ավանդված բառերին, հետգրաբարյան բառաշերտին, փոխառություններին, որոնցում առանձնացնում է հատկապես մոնղոլական փոխառությունները: Մասնագիտական գրականության մեջ ընդունված են փոխառությունների ուսումնասիրության տարբեր հայեցակետեր, դասակարգման սկզբունքներ, որոնք պայմանավորված են փոխառությունների բնույթով, նրանց ժամանակագրական յուրահատկություններով: Անհերքելի է, որ Գանձակեցու «Պատմության» մոնղոլերեն բառացանկը կարևոր է հեղինակի երկի լեզուն քննելու տեսանկյունից: Բոլոր դեպքերում փոխառությունները բնութագրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ երկու հանգամանք՝ լեզվական շփումների, փոխազդեցությունների բնույթը և փոխառությունների արժեքը: Կարևոր է հատկապես բացահայտել փոխառությունների որակական-գործառական յուրահատկությունները, նրանց կենսունակության, բառաֆոնդում ունեցած տեսակարար կշիռ: Այդ բառերի ոչ հայերեն բնույթը հավաստվում է անհրաժեշտ զուգահեռներով: Մոնղոլերեն բառերի մի մասը հայերենին է անցել արաբերենից, թյուրք-թաթարական լեզուներից, ինչպես՝ *աթարակ/աթարեկ, աղա, դուման/թուման, թաղար, խաթուն, մելիք, տուպրակ* և այլն: Իսկ *թանգրի* («աստված»), *թիրոն* («զլուխ»), *սախալ* («մորուք»), *նարան* («արեգակ»), *սույնի* («գիշեր»), *օտուր* («լույս») և այլ բառեր գուցե փոխառյալ բառաշերտի մեջ են ընդգրկված, բայց հայերենում չեն ամրագրվել, ուստի անհրաժեշտ էր նշել դրանց օտար լինելը. տարբեր ժամանակներում տարբեր լեզուներից կատարված փոխառությունները չեն կարող գնահատվել նույն չափանիշով: Քննվող երկում փոխառությունների առատ գործածությունը պայմանավորված է ոչ թե լեզվի ներքին պահանջով, այլ պատմական հանգամանքներով:

Էապես կարևոր է գրաբար-բարբառ առնչությունների հետազոտությունը: Այն նպաստում է բացահայտելու լեզվական այս կամ այն երևույթի դրսևորումը հենց գրաբարի համակարգում, լեզվական տարբեր երևույթների՝ բարբառներում կրած

փոփոխությունները: Ըստ էության կիլիկյան նորմավորման ենթաշրջանում դժվար է տարբերակել խոսակցական լեզուն և բարբառը: Խոսակցական տարբերակները բառեր ու բառաձևեր են, ոչ գրական լեզվի տարբեր և դրսևորում են հնչյունական ակնհայտ փոփոխություններ ու տարբերություններ: Այս տեսանկյունից էլ կարևորվում է վերը մեր նշածը: Բարբառային բառաշերտի բառերը գրական լեզու են թափանցում բարբառներից և հնարավոր է պարզել դրանց ակունքը: Գանձակեցու «Պատմության» մեջ արձանագրվում են ժողովրդական բանահյուսության ակունքներից սերած զրույցներ, հրաշապատումներ, ժողովրդական բառուբանի շարադրանք, որոնք արտացոլում են դարաշրջանի հասարակական, կրոնական ըմբռնումները, սնահավատությունը: Արդյո՞ք դրանցում գրաբարի քերականական օրինաչափություններից շեղվող բառեր կամ բառաձևեր չկան:

Եվ մի կարևոր հանգամանք ևս: Ինչպես նշում է Լ. Հովհաննիսյանը «Թեպետ միջին հայերենի ժամանակներից սկսած և մինչև XX դարասկիզբ հարատևող օտար ազդեցությունների ներթափանցման հետևանքով հայերեն բառերը կա՛մ դուրս էին մղվում, կա՛մ լավագույն դեպքում դառնում հոմանիշներ, բարբառների գրաբարյան տարրերի զգալի մասը, շնորհիվ հաճախական ու ակտիվ գործածության, առայսօր էլ կենդանի ու գործուն է բարբառներում»²:

Գանձակեցու «Պատմության» բառապաշարի ձևախմաստային խմբերի քննությունն ատենախոսն իրականացնում է՝ առանձնացնելով հոմանիշ, հականիշ և համանուն բառերը՝ բնագրային օրինակներով: Նշում, որ այդ բառերը ընդգծում են «հեղինակի խոսքի անհատականությունը» և «երկի գեղարվեստականության կարևոր վկայություններից են» (Ատեն., էջ 44): Բերած օրինակները (*բերրի-արգասնդ, պէսպէսս եւ զանազանս, Ասորոց երկիր-Ասորիք, Հայոց աշխարհ-Հայք. չարչարելի-անչարչարելի, շարժուն-անշարժուն*), սակայն, բավարար չեն ցույց տալու հեղինակի լեզվի հարստությունը, ոճի անհատականությունը: Մանավանդ, որպէս տարարմատ հականիշներ են ներկայացվում *տիւ եւ գիշեր, արս եւ կանայս, աստուածային եւ մարդկային* բառերը (Ատեն., էջ 46): Մինչդեռ անհրաժեշտ էր ներկայացնել հուզաարտահայտչական գունավորում ունեցող այնպիսի բառեր կամ արտահայտություններ, որոնք ընդգծում են հեղինակի վերաբերմունքը դրանց նկատմամբ և համատեքստում էլ դրսևորվում են իմաստային տարբեր նրբերանգներով: Կարելի էր ներկայացնել նաև բառերի իմաստային նոր կիրառություններ, որոնք առնչվում են տվյալ ժամանակաշրջանի լեզվամտածողությանը, արտահայտում բառիմաստի ընդհանրական դրսևորում, ինչպէս նաև նորակերտ կամ նորակազմ բառեր, որոնք առաջին անգամ են գործածվում այդ երկում և հնարավորություն են ընձեռում ճշտելու նաև դրանց ժամանակագրությունը (եթե, իհարկե, այդպիսիք կան):

Ըստ ատենախոսի՝ բառակազմական տեսակյունից Կ. Գանձակեցու «Պատմության» բառապաշարն առավել կամ պակաս չափով հագեցած է և՛

² Լ. Հովհաննիսյան, Բառային հնարանությունները Ղարաբաղի բարբառում.- *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1979, N 9, էջ 53:

հարադրական, և՛ համադրական բարդություններով, ինչպես նաև վերջածանցավոր կազմություններով: Վերջիններիս համեմատությամբ քիչ են նախածանցավոր բառերը:

Ի տարբերություն բառապաշարի՝ քերականությունն ավելի պահպանողական է, սակայն միջին հայերենի քննությամբ արձանագրվում են նաև ձևաբանական ու շարահյուսական որոշ փոփոխություններ, որոնց հանգամանակից անդրադարձել է ատենախոսը: Այդ փոփոխությունները պայմանավորված են ժամանակի խոսակցական լեզվի, մասամբ նաև բարբառների ազդեցությամբ, և եթե սրանք արձանագրվում են, ինչու՞ չկան բառապաշարում:

«Պատմութիւն Հայոց» երկի ոճական առանձնահատկությունները՝ գլխում ատենախոսն անդրադառնում է «Պատմության» լեզվի պատկերավորման միջոցներին, բանադարձումներին:

Նաև մի քանի նկատառումներ, որոնք առնչվում են հղումներին, եզրակացությանն ու օգտագործված գրականության ցանկին.

ա) Տողատակում «Նույն տեղում» գրելու դեպքում գրքի կամ հոդվածի էջը չի նշվում, մինչդեռ ատենախոսության մեջ էջերը նշված են՝ էջ 9, 10, 11, 12, 14, 25, 26, 34, 35, 36, 37, 38, 39, 40 ...

բ) Եզրակացությունը դատողությունների հիման վրա կատարած մտահանգում է, այսինքն՝ աշխատանքի ընդհանուր գնահատականը. եզրակացությունները բխում են քննության արդյունքներից, ուստիև օրինակներ չեն նշվում:

գ) Գրականության ցանկում նշված չեն հրատարակչությունները: Կան նաև վրիպակներ ցանկի 33, 52, 59 համարներում:

դ) Ատենախոսին կարող էին օգտակար լինել նաև մի քանի գրքեր, որոնք վրիպել են նրա ուշադրությունից.

- ✓ Հ. Աճառյան, «Մի քանի սրբագրութիւններ հայ մատենագիրներու մէջ», «Արարատ», 1913, էջ 1145:
- ✓ Թ. Շահվերդյան, «Գրաբարի հոլովման համակարգի և կրած փոփոխությունների մասին», Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա, Ե., 2016, էջ 72:
- ✓ Թ. Մինասյան, «Արցախի գրչության կենտրոնները», «Նաիրի» հրատ., Ե., 2015, 220 էջ:

Լիլիթ Հակոբյանի «Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզուն» թեկնածուական ատենախոսությունը ունի կարևոր արժեք. արտացոլում է հայերենի պատմական զարգացման ընթացքը, կիլիկյան նորմավորման շրջանի փուլի լեզվական անմիօրինակություններն ու նոր որակի անցնելու առանձնահատկությունները:

Աշխատանքի հիմնական բովանդակությունն արտացոլված է սեղմազրում:

Հրատարակված է վեց հոդվածները ևս համապատասխանում են աստենախոսության բովանդակությանը:

Այս ամենը մեզ թույլ է տալիս միջնորդելու Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող 019 մասնագիտական խորհրդին Լիլիթ Հակոբյանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Բ.Գ.Թ., դոցենտ  Գ.Ս.Մխիթարյան

Հաստատում եմ բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Մխիթարյանի ստորագրությունը:

Լեզվի ինստիտուտի փոխտնօրեն  Ն. Հովհաննիսյան



01.09.2022 թ.